«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Թևոսյան Նաիրա Ամասիկի

Ուսումնական հաստատություն՝ Երևանի թիվ 45 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գլուխ 1. Ընտանիքի հոգեբանություն
3. Գլուխ 2. Կոնֆլիկտներ
4. Եզրակացություն
5. Օգտագործված գրականության ցանկ

1. Ներածություն

Ընտանիքը բնության գլուխգործոցներից մեկն է

(Ի.Սանտայանա)

Հայտնի է ընտանիքի տեղն ու դերը հասարակության զարգացման, նրա արժեքների ստեղծման ու վերարտադրության գործում: Ընտանիքի՝ որպես հասարակության բջջի ու մանրակերտի ներքին հարաբերություններով ու վիճակով է զգալիորեն պայմանավորված հասարակության հոգևոր ու նյութական դիմագիծը, նրա կենսունակությունը: Այդ փոքրիկ աշխարհի գիտական ու հոգեբանական գիտապատկերի վերահանումն ազգային, հասարակական ու պետական նշանակության կարևորագույն հարցն է: Բազմաթիվ գիտական և այլ աշխատանքներ են նվիրվել ընտանիքի ամենատարբեր և օրինախնդիր հիմնահարցերին: Ընտանիքի և հասարակության հետ կապն առաձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման,նրա մարդկային ճակատագրի համար: Եվ պատահական չէ,որ բոլոր հասարակական ֆորմացիաները շահագրգիռ են ընտանիքի կյանքի բովանդակության և կառուցվածքի նկատմամբ: Չափազանցված չենք լինի, եթե պնդենք, որ ընտանիքը, դրա յուրաքանչյուր տեսակ քաղաքակրթության զարգացման էական ցուցանիշ է, հասարակության կերպի սոցիալ-հոգեբանական հայելին:

Պատմականորեն ձևավորված խմբերի մեջ ամենակայունն է և երկար ժամանակ կմնա այդպիսին,քանի դեռ այն լավագույն ձևով բավարարում է մարդկանց բազմաթիվ համադրված պահանջմունքները: Թեև որոշ հեղինակներ հայտարարում են ընտանիքի քայքայման, անգամ վերացման մասին, սակայն այսօր նկատելի է ընտանիքի զարթոնքի ու վերակազմության մի նոր շրջան: Հասարակությունը զարգանալով՝ ձգտում է իր վրա վերցնել ընտանիքի որոշ գործառույթները, ձգտում հնարավորինս թեթևացնել նրա բեռը, մյուս կողմից էլ ժամանակն է ընտանիքին տալ նոր դերեր:

Ընտանիքի հոգեբանության բնագավառում եղած հետազոտություն-ների հաշվառումով, այս աշխատությամբ նպատակ եմ դրել քննարկել ընտանիքի հոգեբանության և կոնֆլիկտների արդի հիմնախնդիրները և դրանց մեթոդաբանական վերլուծությամբ՝ ներկայացնել ընտանիքի սոցիալ-հոգեբանական համայնապատկերը:

Այդ նպատակի իրականացման համար կիրառել եմ երկու հիմնական հետազոտական դիրքորոշում.

ա) Ընտանիքի հոգեբանության հիմնախնդիրները քննարկել դերերի տեսության սկզբունքներով և մոտեցումներով, ընտանիքը դիտարկել որպես իր անդամների որոշակի կարգավիճակների ու դերերի համակարգ, իսկ ժամանակի մեջ ընտանքիքի դինամիկան՝ որպես այդ համակարգի փոխակերպումների ընթացք՝ իր յուրահատուկ փուլերով և օրինաչափություններով:

բ) Ցույց տալ, թե ընտանիքում անհատների դերերն ու դերային փոխհարաբերություններն ինչպես են փոխադրվում հասարակության ավելի լայն միջավայր՝ այլ խմբեր, կազմակերպություններ, թե ընտանիքը ինչպես է ազդում հասարակության կառուցվածքի և զարգացման վրա: Մի շարք կոնկրետ հիմնախնդիրների վերաբերյալ առաջադրված վարկածներն ու տեսակետները ոչ միայն դրանք լուծելու փորձեր են, այլև հնարավորություն՝ ընտանիքի հոգեբանության բնագավառում նոր տեսական ու փորձարարական հետազոտություններ ձեռնարկելու համար: Առաջադրել ենք մի շարք տեսակետներ, նկատառումներ, վարկածներ սպասումների, ներընտանեկան դերերի, ընտանիքի տեսակների, ընտանիքներում սոցիալականացման գործընթացների վերաբերյալ: Ընտանիքի հոգեբանության բնագավառում ըստ էության նորովի ենք քննարկում սոցիոմետրական և ախտածին դերերի ծագման ու դրսևորման հարցերը:

Առանձնահատուկ դիտարկել եմ դերային բախումները և ճգնաժամերը, դրանց ծագման և դրսևորման յուրահատկությունները ընտանիքներում: Այդ առումով նոր համադրույթ ենք ներկայացնում բախումների և հարմարման փոխներգործության մասին: Առաջին անգամ քննարկվում է այն, թե ինչ է ընտանիք կազմելու անընդունակությունը, ինչպիսին է ապրումակցման դերը ներընտանեկան հարաբերություններում: Միաժամանակ փորձ է արվում դերային վերլուծության ենթարկել նորմատիվ ճգնաժամերից մի քանիսը, որոնք մինչ այժմ ընտանիքինն վիրված հոգեբանական գրականության մեջ պարզապես միայն նկարագրումվում են: Բախումների լուծման և զիջողության հարցերը քննելիս նոր տեսակետ ենք առաջադրել զիջողության սոցիալ-հոգեբանական հիմքերի վերաբերյալ:

Հավակնությունը չունենալով սպառել ընտանիքի հոգեբանության հիմնախնդիրները, առավել ևս՝ դրանց լուծումները, խորհելով մեր ազգային ընտանիքի մասին, կիսվելով մեծ ու փոքր իմ ժամանակակիցների հետ, համոզվում եմ, որ մեր ազգային ընտանիքը կարիք ունի ամենայն աջակցության, որ իր բազմապիսի խնդիրների հոլովույթում շարունակ երկրորդվում է ամուսնության, ներընտանեկան հարաբերությունների, հոգեբանական ու դերային կարգավորման, գիտելիքների, դրանց կիրառման հմտությունների նշանակությունը, ներընտանեկան կյանքի սոցիալ-հոգեբանական կազմակերպման մշակույթն ընդհանրապես: Այս հետազոտական աշխատանքով ցանկանում եմ ցույց տալ ընտանիքում եղած սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, կոնֆլիկտները ինչպիսի գիտական խթան կհանդիսանան:

Գլուխ 1. Ա. Ընտանիքը՝ մարդկային խմբի տեսակ

Ազգերի զորությունը ընտանիքի մեջ է
Զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ
(Մուրացան. «Գևորգ Մարզպետունի»)

Ընտանիքի հոգեբանական, սոցիալական և մանկավարժական խնդիրները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է հենվել ժամանակակից հոգեբանության նվաճումների վրա: Հոգեբանությունը, ինչպես հայտնի է, ուսումնասիրում է մարդուն և մարդկային փոխհարաբերությունները, բայց որոշակի տեսանկյունից: Այս գիտության խնդիրն է պարզել, թե ինչ է մարդու հոգեկանը, ինչպես է այն ծագում և զարգանում, ինչպես է մարդը մտածում, իմանում շրջապատող աշխարհն ու ինքն իրեն, ինչպես են նրա մեջ զարգանում բնավորություն, ընդունակություններ և այլ հոգեկան կազմավորումներ: Հոգեբաններին, ինչպես նաև բոլոր մարդկանց, շատ է հետաքրքրում մարդկային հարաբերությունների ոլորտը և այն, թե ինչ նոր հոգեկան երևույթներ են ծագում, երբ մարդը հարաբերությունների մեջ է մտնում մեկ ուրիշի կամ մի ամբողջ խմբի հետ:

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսերից սկսած, և հատկապես 20-րդ դարում, ձևավորվեցին մի շարք գիտություններ, որոնք ուսումնասիրում են մարդու կյանքը և զարգացումը սոցիալական խմբի կազմում: Այդ գիտություններն են՝ սոցիոլոգիան, սոցիալական հոգեբանությունը, անձի զարգացման հոգեբանությունը և սոցիալական ու ընտանեկան մանկավարժությունը:

Խոսելով ընտանիքի հոգեբանական խնդիրների մասին՝ մենք հենվելու ենք հիմնականում այդ երեք գիտությունների բնագավառներում ստացված տվյալների վրա:

Բ. Ընտանիքի տեսակները

Ամուսնական միությունը մարդկային հասարակության առաջին աստիճանն է

(Ցիցերոն)

Հին և նոր հեղինակներից ոմանք նույնացնում են «ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունները, մի բան, որն, անշուշտ, ճիշտ չէ: Կասկած չկա, որ դրանց միջև անխզելի կապ կա,քանի որ առանց ամուսնության չկա ընտանիք: Բայց ամուսնությունը և ընտանիքը պատմականորեն միաժամանակ չեն առաջացել:

Ամուսնությունը կնոջ և տղամարդու միջև սոցիալական կապի հատուկ տեսակ է,որը պատմության ընթացքում բազմաթիվ փոփոխություններ է կրել: Այդ կերպ հասարակությունը կարգավորում է նրանց հարաբերությունները և դրանով իսկ հիմքեր ստեղծում ամուսնական, ծնողական իրավունքների և պարտականությունների ձևավորման համար:Այլ կերպ ասած, ամուսնական կապ թույլ տալով և հսկելով նրա վրա, հասարակությունը որոշում է նաև,թե ինչպիսին պետք է լինեն նման տնական փոխհարաբերության մեջ մտնող անձանց ամուսնական և ծնողական դերերը: Ամուսնությունը և ընտանիքը նույնական կլինեին,եթե վերջինս կազմված լիներ միայն ամուսիններից: Բայց կին-տղամարդ երկյակը,որը կապված է ամուսնական պաշտոնական միությամբ կամ դաշինքով, դեռևս լիարժեք ընտանիք չէ: Այն ընտանիքի ձևավորման որոշակի և անհրաժեշտ փուլ է:

Լիարժեք միջուկային ընտանիքը ստեղծվում է միայն առաջին երեխայի ծնվելու հետ միասին: Իսկ եթե բացի ամուսիններից ու երեխաներից այդ սոցիալական խմբի մեջ մտնում են նաև այլ ազգականներ(պապ, տատ, հորաքույր և այլն),ապա դա արդեն ընդլայնված ընտանիք է: Ընդլայնված ընտանիքի օրինակով մենք պարզորոշ տեսնում ենք, որ ամուսնությունն ու ընտանիքը սերտորեն կապված, բայց իրարից տարբեր երևույթներ են:

Ամուսնության և ընտանիքի պատմական զարգացումը: Ընտանիք հիշեցնող կազմավորումներ դիտվում են դեռևս մարդանման կապիկների և նույնիսկ ավելի ցածրակարգ կենդանիների շրջանում: Դրանք նման են միջուկային ընտանիքին՝ կազմված լինելով ծնողներից և զավակներից:

Մարդանման կապիկների հոտերում զուգորդվում է մեկ արուի հետ կապված երկու և ավելի էգեր, որոնցից ծնվում են նոր կապիկներ:

Մարդային բոլոր հին և նոր հասարակություններում եղել են և կան ընտանիքներ: Դրանք մարդկային սոցիալական կեցության հիմնական ձևերն են, թեև պատմական փոփոխություններ են կրել և այժմ էլ ընտանիքը , հավանորեն, իր վերջնական ձևին դեռ չի հասել: Ընտանիքի ձևը կամ տեսակը կախված է ամուսնության ձևից: Այդ պատճառով էլ այդ երկու երևույթների՝ամուսնության և ընտանիքի պատմական զարգացումն ու հերթափոխումը դիտարկվում են միասին:

Նախնադարյան համայնքում սեռական հարաբերությունները չէին կարգավորում, չկային հասարակության կողմից ստեղծված ու կիրառվող սահմանափակումներ, որոնք սովորույթի ուժ ունենային: Հետևաբար պետք է կարծել, որ այդ դարաշրջանում տղամարդու և կնոջ փոխհարաբերություն-ների միակ կարգավորիչներն էին ֆիզոլոգիական, գուցե, փոքր չափով նաև հոգեբանական գրավչությունն ու արտաքին պատահական հանգամանքները: Ուժեղ և ճարպիկ տղամարդիկ ավելի մեծ թվով կանանց էին տիրապետում և ավելի շատ սերունդ էին թողնում: Այդ պայմաններում հաճախակի բախումներ էին առաջանում հոտի մեջ մտնող անհատների միջև, խանգարում էր նրանց համատեղ գործունեությունը: Դա սպառնալիք էր ստեղծում հոտի (համայնքի) գոյության համար: Ահա թե ինչու սեռական կյանքի ոլորտում անհրաժեշտաբար սկսեցին ստեղծվել արգելքներ և սահմանափակումներ: Սեռական բնազդի առավել ծայրահեղ դրսևորումները սկսեցին զսպվել: Այդ արգելքներն ու սահմանափակումները հոգեբանության մեջ անվանում են սանկցիաներ: Ինչպիսի՞ կոնկրետ սանկցիաներ ծագեցին:

Ամենից առաջ արգելք (տաբու) դրվեց ծնողների և զավակների սեռական հարաբերությունների վրա: Ըստ պատմաբանների և մարդկության մշակույթն ուսումնասիրող գիտնականների՝ այդ արգելքը պատմական ուղենիշ էր ընտանիքի և մարդկային հասարակության զարգացման գործում: Ըստ էության, հենց այս «պահին» էլ ծագեց ամուսնությունը: Ցեղի ներսում սեռական հարաբերությունները սահմանափակվեցին: Ծագեց ամուսնության առաջին տեսակը խմբային ամուսնությունը: Դա նշանակում է,որ տղամարդկանց մի խումբ ամուսնանում էր մի խումբ կանանց հետ:

Տղամարդկանցից յուրաքանչյուրը կարող էր սեռական կապի մեջ մտնել կանանց խմբի յուրաքանչյուր անդամի հետ և, ընդհակառակը, նույն իրավունքն ուներ նաև այդ խմբի կանանցից յուրաքանչյուրը: Սկզբում այդ ամուսնությունը էդոգամ էր (հուն. էնդո-ներս և գամոս-ամուսնական կապ), այսինքն՝ կատարվում է տվյալ ցեղի ներսում: Այնուհետև այդ խմբային ամուսնությունը դարձավ էկզոգամ (հուն.էկզո-դուրս, գամոս-ամուսնություն): Դա նշանակում է, որ տվյալ ցեղին պատկանող տղամարդիկ կարող էին ամուսնանալ միայն այլ ցեղի կանանց հետ:

Հարց է ծագում. ինչու՞ արգելվեց էնդոգամիան և անցում կատարվեց էկզոգամիայի:

Անկասկած, այժմ այդ հարցին ճշգրիտ պատասխան տալը գրեթե անհնար է: Սակայն պետք է իմանալ ,որ այդ հարցի վերաբերյալ կան հետևյալ ենթադրությունները.

ա) էնդոգամ ամուսնությունն արգելվեց, որովհետև արյունակիցների միջև հաճախ թերարժեք, ժառանգական հիվանդություններ ունեցող երեխաներ են ծնվում,

բ) կյանքն ու առօրյա կարիքները պահանջում էին ընդլայնել հաղորդակցման ոլորտները, կապերի մեջ մտնել այլ ցեղերի հետ,

գ) էկզոգամիան հանգեցնում էր նույն ցեղի մեջ սեռական մրցակցության հողի վրա ծագող կոնֆլիկտների նվազման կամ վերացման, ուստի ցեղն ավելի համախմբված էր դառնում: (1)

Հին և միջնադարյան Հայաստանում թեև եկեղեցին պահանջում էր միակնությունը, սակայն կային նաև բազմակնության դեպքեր: Եկեղեցական կանոններով արգելվում էր ինչպես ազգականների ամուսնությունը միմյանց հետ, այնպես էլ երկրորդ ամուսնությունն ու գաղտնի ամուսնությունը: Ներսես Ա Մեծ կաթողիկոսի նախաձեռնությամբ, եպիսկոպոսների և ավագ իշխանների մասնակցությամբ Աշտիշատում (Մեծ Հայքի Տարոն նահանգ) 364թ. հրավիրված կանոնադիր ժողովում ընդունված կանոններով՝ արգել-վում է Հայաստանում գոյություն ունեցող մի շարք հեթանոսական սովորություններ, հատկապես դատապարտվում է տոհմական ժառան-գությունը ամբողջական պահելու նկատառումով մերձավոր ազգականների ամուսնությունը: (2)

Խմբային ամուսնության տեսակներից մեկը պոլիգամիան է՝ բազմաամուսնությունը: Այն լինում է երկու տեսակ: Առաջինն անվանում են պոլիգինիա, այսինքն՝ բազմակնություն: Այս դեպքում մեկ տղամարդն ունենում է երկու և ավելի թվով կին: Ամուսնության այդ տեսակը մինչև այժմ էլ պահպանվել է արևելքի, հատկապես՝ մուսուլմանական երկրներում: Հարեմը հենց այդպիսի ամուսնության պահպանված ձև է: Այն պաշտոնապես թույլ է տրվում մուսուլմանական օրենքներով: (2)

444/446թթ. հայոց կաթողիկոս Հովսեփ Վայոցձորցու նախաձեռնությամբ Շապիվանում (Մեծ Հայք) գումարած ժողովում, որին մասնակցում էին աշխարհիկ և հոգևոր մեծամեծները, ընդունվել են 20 կանոններ, որոնց մի մասը վերաբերում էին ընտանիքի և ամուսինների հարաբերությունների կարգավորմանը:

Շապիվանի ժողովի սահմանած կանոնախմբի հոդվածների համաձայն՝ ազգականների ամուսնությունը միմյանց հետ համարվում էր «պղծություն և գարշանք» Կանոնախումբը թույլատրում էր ամուսնություն միայն 4-րդ և ավելի ծնունդ հարազատների միջև: (3)

Բազմամուսնության մյուս տեսակը պոլիանդրիան է՝ բազմայրությունը: Այդ դեպքում մեկ կինը ունենում է մի քանի ամուսին: Ամուսնության այս տեսակն ավելի քիչ է հանդիպում ժամանակակից աշխարհում: Մարդկության հետագա զարգացման ընթացքում բազմամուսնությունից անցում կատարվեց զուգամուսնության: Այս դեպքում տղամարդն ապրում է մեկ կնոջ հետ և պարտավորվում է հավատարիմ լինել նրան: Սակայն կնոջ ամուսնական հավատարմությանը ներկայացվող պահանջները մեզ հայտնի բոլոր ժողովուրդների մեջ շատ ավելի խիստ են, մինչդեռ տղամարդու արտամուսնական կապերի նկատմամբ հասարակությունն ավելի հանդուրժող է: Անհավատարիմ կանանց շատ երկրներում խստորեն պատժում են: Կինը հեշտությամբ կարող է ամուսնալուծվել,բայց քանի դեռ ամուսնական կապերի մեջ է տվյալ տղամարդու հետ, պետք է լիովին հավատարիմ լինի նրան:

---

1. Ընտանիքի հոգեբանություն – Ա: Նաչալջյան, Ս· Մկրտչյան
2. Ընտանիքի հոգեբանություն - Ս· Սեդրակյան
3. Հայոց պատմություն (10-րդ դասարան)

Ամուսնալուծվելիս մանկահասակ երեխաներն, այնուամենայնիվ, մոր մոտ էին մնում: Հետագայում,զուգամուսնության դեպքում, մայրն ու հայրը սկսեցին իրենց վրա վերցնել նաև երեխաների խնամքի ու դաստիարակության գործը: Զուգամուսնական կապից ծնվեց ընտանիքի ժամանակակից տիպը՝միջուկային ընտանիքը: Ծնողներն արդեն դառնում են հայր և մայր, նրանց կապում են ոչ միայն սեռական բնազդը, այլև ծնողական զգացմունքները և համատեղ տնտեսություն վարելու անհրաժեշտությունը:

Գ. Ժամանակակից ընտանիքի տեսակները

Սուս քնած է բալիկս անուշ,
Անուշ գրկում մայրիկիս.
Ու հոսում է մուշ-մուշ անուշ,
Քնքուշ քունը բալիկիս:
Մորս սիրտն է նա ամոքում
Մայրս՝ մի վանք ավերակ,
Ու բալիկս՝ ավերակում
Նոր բույն դրած մի թռչնակ:
Զարթնում է նա ու մայրիկիս
Սիրտն է շոյում ճիչն ասես,
Ավերակը կյանքով լցնող
Նոր թռչնակի երգի պես…
(Հովհաննես Շիրազ)

Ընտանիքաբանության բնագավառում առանձնացնում են այդ սոցիալա-կան խմբի հետևյալ տեսակները,որոնք հանդիպում են ժամանակակից ժողովուրդների մեջ.

Միջուկային ընտանիք: Այս տեսակին պատկանող ընտանիքները կազմված են ծնողներից և նրանցից սերված հարազատ զավակներից:

Նման ընտանիքներում հարաբերությունները սերտ են, անմիջական, որը մենք անվանեցինք առաջնային: Այսպիսի ընտանիքներում կան ամուսինների ինտիմ կապեր և ծնող-երեխա առաջնային կապեր: Այսօր Հայաստանում ընտանիքները մեծ մասամբ այս տիպին են պատկանում:

Ընդլայնված ընտանիք: Ընտանիքի այն տեսակն է, որի կազմի մեջ, բացի ծնողներից և զավակներից, մտնում են նաև պապն ու տատը և այլ հարազատներ: Սա մի տարբերակն է: Ընդլայնված ընտանիքի մյուս տարբերակն այն է, երբ երկու եղբայրների միջուկային ընտանիքները միասին ապրում են նույն հարկի տակ: Ընտանիքի այսպիսի տեսակ այժմ էլ հանդիպում է Հայաստանում:

Հավաք կոմպակտ) ընտանիք: Դա այն ընտանիքն է, որի բոլոր անդամներն ապրում են միասին և որոշակի սահմանազատված տեղում, օրինակ՝ մեկ բնակարանում: Հավաք կարող է լինել ընտանիքի նախորդ տեսակներից յուրաքանչյուրը՝ և միջուկայինը, և ընդլայնվածը: Սակայն բոլորովին էլ պարտադիր չէ, որ, օրինակ, միջուկային ընտանիքը հավաք լինի: Նրա անդամները կարող են ապրել իրարից հեռու, տարբեր բնակավայրերում՝ պահպանելով միմյանց նկատմամբ ունեցած զգացմունքներն ու փոխադարձ պարտավորությունները:

Հայ նահապետական ընտանիքը,որը հին և միջին դարերում մեր երկրում ընտանիքի հիմնական տեսակն է եղել, լինելով հավաք՝ միաժամանակ եղել է նաև ընդլայնված: Այստեղ մի քանի սերունդ՝պապեր-զավակներ-թոռներ-ծոռներ, ինչպես նաև որդիների ընտանիքներ, ապրել են մեկ հարկի տակ: (4)

Կարելի է առանձնացնել ընտանիքի չորս հիմնական գործառույթ.

1. Վերարտադրողական, երբ ընտանիքում ծնվում են նոր մարդիկ՝ ապահովելով սերնդի վերարտադրությունը և մարդկության գոյությունը:
2. Տնտեսական ,երբ ընտանիքը ՝որպես տնտեսական միավոր,վաստակում է կենսական միջոցներ և ծախսում՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը: Նախկինում տնտեսական գործառույթը հիմնականում ապահովում էր տղամարդը,իսկ ներկայումս այն բաշխվում է ընտանիքի անդամների միջև:
3. Սոցիալականացման, դաստիարակչական,որի շնորհիվ երեխան ընկալում և յուրացնում է նախորդ սերունդների փորձը, հասարակության մեջ ընդունված վարքի նորմերն ու կանոնները:

Ընտանիքն այն առաջին միջավայրն է, որտեղ աճում և զարգանում է երեխան, ուստի նաև այստեղ են այն առաջին դպրոցն ու ուսուցիչները, որտեղ և ում օգնությամբ նա սովորում է ապրել: 4. Հաղորդակցական,երբ ընտանիքի անդամները շփվում են միմյանց հետ,զգացմունքներ, մտքեր և տեղեկություններ են փոխանակում, փոխազդում են՝ նպաստելով միմյանց զարգացմանը, անձնային, հոգեբանական վերափոխումներին: (5)

Պատմական զարգացման հետևանքով գրեթե ամենուրեք, քրիստոնեական աշխարհում, անցում է կատարվում միջուկային ընտանիքին: Սակայն դա դեռևս չի նշանակում,որ ընտանիքի տեսակը լավագույնն է: Այն ունի իր լուրջ թերությունները: Դրանցից մեկը միջուկային ընտանիքներում ամուսինների կողմից իրենց ծնողական դերերի կատարման հսկողության բացակայությունն է կամ թուլությունը:

Եթե պապերն ու տատերը առանձին են ապրում,ապա բնական է, որ նրանք չեն կարող ամենօրյա հսկողության տակ պահել երիտասարդ ամուսինների ծնողական դերակատարումները, նրանց փոխանցել իրենց փորձը, զբաղվել թոռնիկների դաստիարակությամբ: Այս թերության հետևանքներից մեկը երեխաների դաստիարակության գործում ծնողների կողմից թույլ տրվող սխալներն են, դաժանությունը, թողատվությունը, գերխնամակալությունը և այլն:

Մյուս լուրջ թերությունը այս տեսակի ընտանիքիներից շատերի տնտեսական,ֆինանսական թուլությունն է, որի հետևանքով դրանք քայքայվում են՝ հանգեցնելով ամուսնալուծությունների թվի աննախադեպ մեծացմանը Եվրոպայում, ԱՄՆ-ում, ԱՊՀ բոլոր երկրներում: (6)

---

4. Ընտանիքի հոգեբանություն – Ա. Նաչալջյան, Ս. Մկրտչյան
5. Հասարակագիտություն – 10-րդ դասարան
6. Ընտանիքի հոգեբանություն - Ս. Սեդրակյան

Ներընտանեկան դերեր

Ընտանիքը հասարակության բյուրեղն է

(Վ. Հյուգո)

Սոցիալական դիրք և դեր: Ամուսինները պետք է իմանան և գիտակցեն, որ ամուսնական կյանքը էապես տարբերվում է մինչամուսնական ծանոթության, սիրահարվածության և հանդիպումների շրջանից: Զույգերի ամուսնական կապն ունի մի շարք փուլեր.

ա) մինչամուսնական,որտեղ խումբը երկյակ է, բ) ամուսնության առաջին շրջան,որտեղ ընտանքիը նույնպես երկյակ է, մինչև առաջին երեխայի ծնունդը, գ) առաջին երեխայի ծննդյան պահից սկսած, երբ միջուկային ընտանիքը դառնում է եռյակ, դ) հետագա ընթացքը, որն, իհարկե, տարբեր ուղղություններ կարող է ունենալ, սկսած բազմազավակ ու ընտանեկան երջանիկ կյանքից մինչև սուր կոնֆլիկտներ և ամուսնալուծություն:

Մինչամուսնական կապի փուլն ավարտվում է ամուսնական օրինական կապի՝ նոր ընտանիքի ստեղծմամբ: Դա երիտասարդների կյանքում կտրուկ շրջադարձի, բեկման պահ է, և նրանց հետագա հարաբերությունների ճակատագիրը կախված է այն հանգամանքից,թե նրանք ինչպես են պատկերացում իրենց հիմնական ֆունկցիաները, իրավունքներն ու պարտականությունները ընտանեկան կյանքում:

Քանի որ ընտանիքը փոքր ու առաջնային սոցիալական խումբ է, և, ուրեմն, սոցիալական հոգեբանության ուսումնասիրության օբյեկտ, ապա ընտանեկան ֆունկցիաների պարզաբանման նպատակով օգտվենք այդ գիտության «սոցիալական դեր» հասկացությունից: Տվյալ դեպքում խոսքն ընտանեկան դերերի մասին է: Ի՞նչ է ներընտանեկան դերը, ի՞նչ դիրքեր և դերեր ունեն ընտանիքի անդամները:

Եթե ուշադրությամբ դիտենք մարդու վարքը հասարակության մեջ, ապա կտեսնենք,որ,նա,իսկապես, տարբեր իրադրություններում տարբեր դերեր է կատարում, հանդես գալով որպես դերասան,բայց այնպիսի դերասան,որը խաղում է հասարակական բեմերի,իրական կյանքի բեմերի վրա: Փողոցում մենք անցորդ ենք, դպրոցում՝ աշակերտ կամ ուսուցիչ, քաղաքային երթևեկության միջոցներում՝ ուղևոր, բանակում՝ զինվոր, տարեկիցների շրջանում՝ ընկեր և այլն:

Սրանք մարդու սոցիալական դիրքերն են,ստատուսները: Իսկ ստատուսի իրագործումն անվանում են սոցիալական դեր:

Յուրաքանչյուր դեպքում մենք քիչ թե շատ հստակորեն գիտակցում ենք, թե շրջապատողները մեզանից ինչպիսի վարք են սպասում և փորձում ենք արդարացնել նրանց ակնկալիքները, բայց երբ վարքը չի համապատասխանում նրանց ակնկալիքներին, այսինքն՝ տվյալ իրադրության մեջ կամ խմբի կազմում մեր դերին, շրջապատողներն անմիջապես մեզ դա հասկացնում են: Ինչպե՞ս է դա կատարվում՝ խոժոռ հայացքով, դիտողություններով, ամոթանք տալով, որոշ բարիքներից զրկելով և այլն: Երբ աշակերտը դասարանում ճիշտ չի կատարում իր դերը,ապա ուսուցիչը նրա նկատմամբ կիրառում է վերոհիշյալ պատժամիջոցներից մեկը՝ փորձելով ճիշտ հունի մեջ դնել նրա դերակատարումը: Այդ և բազմաթիվ այլ պատժամիջոցներ, որոնք օգտագործում են մարդկանց սոցիալական դերերի կատարումը կարգավորելու նպատակով, կոչվում են բացասական սանկցիաներ: Կան նաև դրական սանկցիաներ կամ խրախույսներ: Դրանք արդեն կիրառում են մարդկանց ճիշտ և հաջող դերակատարումները խրախուսելու նպատակով,որպեսզի նրանք շարունակեն այդպես կամ ավելի լավ գործել: Որքան ավելի մեծ պատրաստակամությամբ է մարդն ընդունում և ստանձնում իր դերը,այնքան ավելի արդյունավետ է դերակատարումը:

Երբ զինվորը կարգապահ է լինում և քաջագործություններ է կատարում, հրամանատարությունը նրան խրախուսում է որոշ դրական սոցիալական սանկցիաների օգնությամբ: Նրան գովում են, պարգևատրում, իսկ մեծ քաջագործությունների դեպքում հերոսի կոչում են շնորհում:

Գովասանագիրը, որ դպրոցում տալիս են աշակերտին, նույնպես դրական սանկցիա է, խրախուսելու միջոց,որը տրվում է աշակերտի դերը ճիշտ կատարելու դեպքում: Այսպիսով՝առօրյա կյանքում մարդիկ տարբեր խմբերում և իրադրություններում գրավում են տարբեր դիրքեր և կատարում են տարբեր դերեր: Այդ իմաստով մենք հասարակության մեջ մարդու վարքը կարող ենք դիտել որպես դերակատարումների շարք:

Յուրաքանչյուր մարդ որոշ իմաստով դերասան է և կատարում է այն, ինչ շրջապատողները սպասում են իրենից:

Բ. Ներընտանեկան դերեր

Մեր հույսի դուռն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս,
Մեր ճորտն ու տերնն է մայրս,
Մեր տան աղբյուրն է մայրս,
Մեր արեգակն է մայրս
Մեր տան աստվածն է մայրս:

(Հովհ.Շիրազ)

Ընտանիքում ևս նրա յուրաքանչյուր անդամ ունի իր դիրքն ու համապատասխան դերը կամ դերերը:

Այդ դիրքերի և դերերի անունները մեզ քաջ հայտնի են. հայր, մայր, զավակներ (աղջիկ, տղա), պապ, տատ և այլն: Ընտանիքի դերային կազմը կախված է նրա տեսակից: Միջուկային տիպի ընտանիքներում նրանք ծնողներն են և զավակները: Ընտանիքում յուրաքանչյուր անդամի վարքը կախված է նրա գրված դիրքից և համապատասխան դերից: Ընդ որում, մի փոխհարաբերության մեջ մարդը հանդես է գալիս մեկ դերով, մյուս փոխհարաբերության մեջ՝ այլ դերով:

Այսպես, ընտանիքի հայրն ու մայրը միմյանց նկատմամբ ամուսիններ են, իսկ հոր և մոր դերեր կատարում են իրենց զավակների հետ ունեցած փոխհարաբերություններում:

Տարբեր ազգային և մշակութային միջավայրերում ներընտանեկան դերերի մասին պատկերացումներում կան որոշակի տարբերություններ, բայց կան նաև մեծ նմանություններ: Ընտանիքի հայրը այդ խմբի գլխավորն է, դրամով, տնտեսապես ապահովողն ու պաշտպանը: Նրա աշխատանքային գործունեությունը հիմնականում ընթանում է դրսի սոցիալական աշխարհում: Ըստ ավանդական պատկերացումների՝ որպես ամուսին նա պետք է հավատարիմ լինի իր կնոջը և միայն ինտիմ հարաբերություն ունենա նրա հետ: Նա պետք է մասնակցի երեխաների դաստիարակության գործին, բայց հիմնականում որպես կարգ ու կանոն հաստատող հեղինակություն, որի առջև ընտանիքի մյուս անդամները պատկառանք, նույնիսկ որոշ չափով վախ են զգում: Նա ունի ոչ միայն դերային պարտականություններ, այլև իրավունքներ: Կարող է պահանջել, որ ընտանիքի անդամները ենթարկվեն որոշակի կանոնների,

վարվեցողության որոշակի ձևեր յուրացնեն, պաշտպանեն ընտանիքի պատիվը, խնայող լինեն և այլն: Այլ կերպ ասած՝ հոր ներընտանեկան դերը, ինչպես և ամեն մի այլ սոցիալական դեր, կազմված է որոշակի իրավունքներից և պարտականություններից, որոնք ստացել են սոցիալական սպասումներ անունը:

Ընտանիքի մայրը ամուսնու հետ ունեցած հարաբերություններում հանդես է գալիս կնոջ դերում, մինչդեռ երեխաների հետ հարաբերվելիս նա մայր է: Ըստ այդմ էլ ընտանիքում նա ունի իրավունքների և պարտականությունների երկու տարբեր համակարգեր, որոնք ամենասերտ կերպով կապված են իրար: Որպես կին՝ նա պետք է լինի, ըստ մեր ավանդույթների, հեզ, պետք է ենթարկվի ամուսնուն, հիմնականում զբաղվի տնային գործերով: Նրա խնդիրն է ընտանեկան օջախը հաճելի դարձնել ընտանիքի անդամների համար: Դրսի աշխատանքը ավանդաբար, այդ թվում նաև հայ իրականության մեջ կնոջ համար պատշաճ չի համարվել: Սակայն 20-րդ դարի կեսերից վիճակը կտրուկ կերպով փոխվել է, քանի որ կանանց զգալի մասը ստիպված աշխատել է և օգնել ամուսնուն:

Կնոջ դերի նկատմամբ մոտեցումն այդպիսի ավանդապաշտական բնույթ է կրել ոչ թե միայն մեզ մոտ,այլև ուրիշ երկրներում: Օրինակ՝ 1940 թվականին ԱՄՆ-ում աշխատում էր կանանց ընդամենը 14 տոկոսը: Այժմ այդ թիվն անհամեմատ մեծ է, ըստ որի ամենուրեք ընտանեկան դերերի և հասարակության մեջ կնոջ ֆունկցիաների մասին պատկերացումներն արագորեն փոխվում են:

Եթե ամուսիները հոժարակամ ընտրում են իրենց այս ավանդական դերերը, ապա դա լուրջ հիմք է ստեղծում նրանց ընտանեկան խաղաղ կյանքի և երջանկության համար: Բայց մեր օրերում շատերին այդ ավանդական և հասարակության կողմից պարտադրվող (վերագրվող) դերերը չեն գոհացնում: Շատ կանայք դժգոհում են, որ չեն կարողանում ինչպես հարկն է մասնագիտանալ և հասարակության մեջ բարձր դիրքերի ձգտել: Նրանք չեն ցանկանում ենթակայական դերեր կատարել: Դժգոհում են,որ ամուսնանալուց հետո կտրվում են իրենց ընկերական շրջապատից:

Տղամարդիկ ևս միշտ չէ, որ գոհ են իրենց ավանդական դերերից, քանի որ նրանց համար շատ դժվար է միայնակ կրել ընտանիքի առջև ունեցած տնտեսական պատասխանատվությունը:

Այդպիսի մեծ պատասխանատվությունը մշտական տագնապի ու անհանգստության աղբյուր է հանդիսանում և ազդում է նաև ֆիզիկական վիճակի վրա՝ հագեցնելով, այսպես կոչված, հոգեմարմնային հիվանդությունների (ստամոքսի խոցեր, շնչառական օրգանների ախտահարումներ և այլն): Այդպիսի գերծանրաբեռնված տղամարդկանց շրջանում բարձր է նաև մահացության աստիճանը: Ամբողջ աշխարհում գնալով մեծանում է աշխատող կանանց թիվը: Այժմ մեծ թիվ են կազմում այն կանայք, ովքեր համատեղում են ընտանեկան դերերը (կին, մայր) աշխատանքային դերերի հետ (ուսուցիչ, բժիշկ, իրավաբան, վաճառող և այլն): Նույնիսկ այնպիսի ապահովված երկրում, ինչպիսին ԱՄՆ-ն է, մեծաթիվ կանայք աշխատում են: 1980-ական թվականների կեսերին այս երկրում աշխատող կանանց թիվը հասնում էր 50 միլիոնի, իսկ աշխատող տղամարդկանց թիվը՝ 65 միլիոնի: Ընդ որում, այդ կանանց զգալի մասը՝ 15 միլիոնից ավելին, մայրեր էին:

Բազմաթիվ կանայք ներկայումս այնպիսի աշխատանքներ են կատարում, որոնք անցյալում տղամարդկային գործ են համարվել: Կանանց կարելի է տեսնել գործարաններում, դպրոցներում, բժշկական հիմնարկներում, պետական ծառայության մեջ և այլուր:

Մանկավարժության բնագավառում նրանք նույնիսկ մեծամասնություն են կազմում: Այդպես է նաև մեզ մոտ՝ Հայաստանում, և այս հանգամանքը լուրջ խնդիրներ է ծնում՝ կապված, մասնավորապես, տղաների կրթության ու դաստիարակության հետ:

Բայց տղամարդիկ էլ այժմ այնպիսի աշխատանքներ են կատարում, որոնք ավանդաբար կանացի են համարվել: Օրինակ՝ տղամարդկանց կարելի է տեսնել կրտսեր դպրոցական դասարանների ուսուցիչների, նույնիսկ մանկապարտեզի դաստիարակների, հեռախոսավարների, դայակների և այլ դերերում: Հայաստանում բազմաթիվ տղամարդիկ չեն խորշում խանութների և նույնիսկ փողոցային վաճառողների դերերից:

Վերջապես, ավանդական պատկերացումներ կան ընտանիքում տղայի և աղջկա դերերի մասին: (7)

---

7. Ընտանիքի հոգեբանություն – Ա. Նաչալջյան, Ս. Մկրտչյան

4. Մայրիշխանություն և հայրիշխանություն

Հնագետներն ու ազգագրագետները գտնում են, որ Հայկական լեռնաշխարհում հայրիշխանությունը հաստատվել է բրոնզի դարի սկզբին (այսինքն՝ Ք.Ա.4-րդ հազարամյակի վերջին և 3-րդ հազարամյակի սկզբին): Հայկ նահապետի մասին առասպելը վկայում է,որ հայոց ազգն իր կազմավորման սկզբում պատմական բեմի վրա հանդես է գալիս որպես հայրիշխանական տոհմերից կազմված մի ամբողջություն:
Ա. Մայրիշխանություն: Մայրիշխանությունը, որպես ընտանիքի տեսակ, գոյություն է ունեցել քարի դարում: Այս ժամանակաշրջանում մարդկային համայնքներում կինը գերիշխող դեր է գրավել: Ամուսնանալիս տղամարդն էր տեղափոխվում իր մոր տոհմից՝ կնոջ տոհմի մեջ ապրելու համար: Նա ապրում էր կնոջ տանը և, ինչպես հայերս ենք անվանում, «տնփեսա» էր դառնում: Այդ պատճառով ամուսնության այս տեսակն անվանում են մայրատեղային: Գույքը և պաշտոնները ժառանգվում էին մոր գծով (ինչպես այժմ հրեաների մեջ): Տոհմական համայքը մայրական էր: Ամուսին ընտրելու իրավունքը կնոջն էր պատկանում և առաջին հերթին տղամարդն էր պարտավոր հավատարիմ լինել ամուսնական կապի մեջ:

Դեռևս 15-16-րդ դարերում այնպիսի ազգություններ և ցեղեր, ինչպիսին էին բուշմանները, ավստրալիացիները, Հրո երկրի բնակիչները, գտնվում էին մայրիշխանության տարբեր աստիճանների վրա: Այժմ էլ որոշ հետամնաց ժողովուրդների մեջ մայրիշխանության որոշ տարրեր պահպանվել են:
Բ. Հայրիշխանություն: Հայրիշխանությունը ընտանիքի և համայնքի կազմակերպման այն ձևն է, երբ ընտանիքում ու համայնքում, հասարակության ու արտադրության մեջ առաջատար դերը պատկանում է տղամարդուն: Հայրիշխանությունն առավել տարածված դարձավ նախնադարյան համայնական կարգերի քայքայման և հասարակության մեջ սեփականատիրության առաջացման շրջանում: Կնոջ դերը սկսեց սահմանափակվել տնային աշխատանքով և երեխաներին խնամելով: Հայրիշխանության պայմաններում ընտանիքի գլխավորը կամ տոհմի առաջնորդը հայրն է,տղամարդկանցից ավագը: Սերունդը հաշվում են հոր գծով:

Ամուսնությունը դառնում է հայրատեղային,այսինքն՝ կինն է գալիս տղամարդու տանն ապրելու և փաստորեն նրա սեփականությունն է դառնում: Առաջանում են նահապետական մեծ ընտանիքներ կամ գերդաստաններ:

Հայրիշխանությունը երկարատև և հետաքրքրական պատմություն ունի: Ամուսնության և ընտանիքի, ինչպես նաև տոհմի կառավարման այս տեսակի վերաբերյալ ստեղծվել են գաղափարախոսություններ, որոնք հատկապես ամրապնդվել են կրոններում: Այդ գաղափարախոսությունները կնոջն այնքան են նսեմացրել,որ նույնիսկ մինչև 19-րդ դարի կեսերը կաթոլիկ եկեղեցին չէր ընդունում,թե կինը հոգի ունի: Նա տղամարդու համեմատ թանկարժեք էր համարվում: Ընդ որում, նման մոտեցումը շատ տարածված է նաև այժմ, թեև միշտ չէ, որ դրսևորվում է բացահայտորեն:(8)

---

8. Ընտանիքի հոգեբանություն – Ա. Նաչալջյան, Ս. Մկրտչյան

Գլուխ 2.Կոնֆլիկտներ

Կոնֆլիկտը մարդուն հնարավորություն է տալիս տառապելու, մտածելու, և անձի ինքնագնահատականը մեծանում է, երբ կարողանում է օբյեկտիվ ձևով այն ինքնուրույն լուծել
Կոռնելիոս

Ցանկացած փոփոխություն կամ զարգացում տեղի է ունենում հնի վերացումով և նորի ի հայտ գալով: Եթե հինը իր տեղը դժվարությամբ է զիջում նորին, ապա դրանց միջև տեղի է ունենում բախում, հակասություն, որը վերաճելով՝ դառնում է «կոնֆլիկտում» բառից, բառացի նշանակում է բախում: Ռուսաստանում կոնֆլիկտ բառն օգտագործվել է 19-րդ դարում,իսկ 20-րդ դարում այն արդեն տարածության լայն շրջան ուներ: Մարդն իր ողջ կյանքի ընթացքում չի կարող զերծ մնալ կոնֆլիկտներից: Քանի դեռ բաբախում է նրա սիրտը, քանի դեռ կա զարգացում, փոփոխություն մշտապես կլինի նաև կոնֆլիկտ, բախում, հակասություն: Բախումներն անկասկած լավ բանի չեն հանգեցնում, խանգարում են ընդհանուր գործին, խաթարում են մարդկային փոխհարաբերությունները, առաջացնում լարվածություն և ցնցումներ, որոնք բացասաբար են անդրադառնում մարդու առողջության, հոգեկան աշխարհի վրա: Շատ մարդիկ հիմնականում խուսափում և վախենում են բախումներից:

Կոնֆլիկտի դրական և բացասական կողմերը: Բացասական կողմերն են՝

1. Սոցիալական մթնոլորտի վատթարացում, աշխատանքի արտադրողակա-նության անկում, խմբի պառակտում, հեռացում:
2. Կողմերի միջև փոխըմբռման բացակայություն և իրավիճակի ոչ համարժեք ընկալում:
3. Համագործակցության նվազում կոնֆլիկտի ընթացքում (հաճախ նաև հետո):
4. Հակամարտելու ոգին գերազանցում է տարաձայնությունները հաղթահարելու ցանկություն:
5. Կոնֆլիկտի ընթացքում տեղի են ունենում նյութական, բարոյական, հոգեկան ծախսեր:

Դրական կողմերն են՝

1.Կոնֆլիկտը թույլ չի տալիս,որ ձևավորված հարաբերությունները լճանան ու քարանան,այն փոփոխությունների ու զարգացման է մղում՝միաժամանակ ուղի հարթելով նորամուծությունների համար:

2.Կոնֆլիկտի ընթացքում մարդիկ ավելի լավ են ճանաչում միմյանց:

3.Կոնֆլիկտը կարգավորում է սոցիալական խմբի կառուցվածքը, միավորում է համախոհ խմբերը, առաջացնում է նոր կազմակերպություններ և խթանում մարդկանց ակտիվությունը, վերանում է հնազանդության սինդրոմը:

4. Պրոբլեմային իրավիճակում դուրս է բերում մարդու թաքնված հատկությունները:

5. պաստում է անհատի զարգացմանը,պատասխանատվության զգացմանն ու ինքնագնահատմանը:

6.Երբեմն կոնֆլիկտը կարող է բարելավել նախկին վատ, լարված հարաբերությունները և դրանց նոր ընթացք տալ:

Կոնֆլիկտի պատճառները: Կոնֆլիկտի առաջացման պատճառների վերաբերյալ շատ կարծիքներ են հնչել:

Մի առիթով Ֆրոյդը ասել է, որ այն մարդը, ով տվել է առաջին հայհոյանքը, դրել է քաղաքակրթության հիմքը:

1.Կոնֆլիկտի պատճառ է համարվում անհատի և նրա շրջապատող միջավայրի միջև հոգատարության բացակայությունը(առաջին հերթին ծնողների):

2.Կոնֆլիկտ է առաջանում,քանի որ մարդը չի կարողանում հասարակության մեջ ռեալիզացնել անձնական, անհատական ձգտումներն ու պահանջմունքները:

3. Սոցիալական կոնֆլիկտի գլխավոր պատճառն անհատի և ամբոխի ագրեսիվությունն է:

4.Կոնֆլիկտ է առաջանում,երբ խախտվում է հավասարակշռությունը անհատի և միջավայրի միջև:

Հաղորդակցության դերը կոնֆլիկտի հանգուցալուծման գործում: Կոնֆլիկտի հանգուցալուծման գործում կարևոր են բանակցությունները:

Որպեսզի զրույցը արդյունավետ լինի, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պայմանները՝ շփման եզրեր գտնել զրուցակցի հետ, բարենպաստ պայմաններ ստեղծել զրույցի համար, գրավել զուգընկերոջ ուշադրությունը, հետաքրքրություն առաջացնել զրույցի նկատմամբ: Շատ կարևոր է զրույցը վարելու ոճը:

Կոնֆլիկտի կանխարգելում: Կոնֆլիկտի կանխարգելման ընդհանուր տրամաբանությունը այս փուլում պետք է ընդգրկի կողմերի հետևյալ գործողությունները:

1.Բանակցությունները և պայմանավորվածություններ կոնֆլիկտային իրավիճակի վտանգավորության աստիճանի և ապագայում կոնֆլիկտի ծագման հնարավորության շուրջը:

2.Հնարավոր լիակատար տեղեկատվության հավաքում ստեղծված նախակոնֆլիկտային իրավիճակի, բնույթի և պատճառների մասին:

3.Հայտնաբերված խնդիրների անկոնֆլիկտ և անցավ հանգուցալուծման հավանականության աստիճանի բացահայտմանը:

4. Նախակոնֆլիկտային իրավիճակի կառուցողական հանգուցալուծման կոնկրետ խնդիրների և գործողությունների մշակում,այսինքն եղած խնդիրների լուծում՝ բանը չհասցնելով կոնֆլիկտի:

Կոնֆլիկտի տեսակները: Միջանձնային կոնֆլիկտը դա փոխներգոր-ծության մեջ մտած 2 անձանց շահերի, հետաքրքրությունների, պահանջմունքների, պատկերացումների, հայացքների, արժեքների, նպատակների, համոզմունների և անձնական նշանակություն ունեցող այլ գործոնների բախումն է, որն ուղեկցվում է միջանձնային լարվածությամբ, բացասական հույզերով և հարաբերությունների խաթարմամբ: Միջանձնային կոնֆլիկտը կարող է փոխակերպվել ներխմբային կոնֆլիկտների, պառակտումների և ներքին զզվոտոցների պատճառ դառնալ: Սա տիպիկ հայկական մեր էթնիկ հոգեկերտվածքի իռացիոնալ կողմերով պայմանավորված վարքի մոդել է: Չմոռանանք «Մի կաթիլ մեղր» հայկական պատմվածքը:

Ներանձնային է այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը:

Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի: Ներանձնային կոնֆլիկտը ընթանում է հենց ներհոգեկան ոլորտում, հետևաբար դրա կառուցվածքային ու գործառութային դրսևորումները ունի բացառապես հոգեբանական բնույթ: (9)

Կոնֆլիկտների նախականխման և հաղթահարման ուղիները: Գիտնականները պարզել են, որ ծագած կոնֆլիկտները կարելի է ղեկավարել, ինչի համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1.Կոնֆլիկտի կանխատեսում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների,մարդկանց փոխգործակցության,ինչպես նաև անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրում:

2.Կոնֆլիկտի կանխարգելում: Սա սուբյեկտի կառավարման գործունեության տեսակ է,որն ուղղված է կոնֆլիկտի ծագմանը խոչընդոտելուն: Այն իրականացվում է կանխատեսման հիման վրա: Այստեղ գործունեությունն ուղղվում է կոնֆլիկտոգենի չեզոքացմանը:

3.Կոնֆլիկտի կարգավորում: Սա սուբյեկտի այնպիսի գործունեություն է, որն ուղղված է կոնֆլիկտի ավարտին:

Պարզվել է, որ կոնֆլիկտային իրադրության մեջ մարդը դրսևորում է վարքի երեք մոդել.

Կառուցողական,երբ անձը ձգտում է կոնֆլիկտը հարթել, համագործակցել, նպատակ ունի փնտրելու ընդունելի լուծումներ, աչքի է ընկնում զսպվածությամբ, դիմացինի նկատմամբ բարյացակամությամբ, անկեղծությամբ:

Ապակառուղոցական, երբ անձը ձգտում է կոնֆլիկտը սրել չափազանցվել, մրցակցին բացասաբար է վերաբերվում, ցուցաբերում է կասկածամտություն և անվստահություն նրա նկատմամբ, խախտում է շփման նորմերը:

Կոնֆորմիստական, երբ անձը մշտապես պասիվ դիրքում է գտնվում, հակված է զիջման,շատ արագ համոզվում է հակադիր կողմի հետ, խուսափում է սուր հարցերից:

Մարդկային փոխհարաբերությունների հոգեբանություն: Կոնֆլիկտների դեպքում նկատվում են մարդկային փոխհարաբերության հետևյալ ձևերը.

1. Զիջողականության դեպքում անձը փորձում է խուսափել կոնֆլիկտից:

Այս դեպքում խուսափման պատճառը այլ է, այսինքն՝ անձի ուղղվածությունը սեփական հետաքրքրությունների նկատմամբ ցածր է, իսկ մրցակցինի՝ բարձր: Այսինքն՝ անձը, ընտրելով զիջողականության ռազմավարությունը, զոհաբերում է սեփական հետաքրքրությունները՝ հօգուտ մրցակցի:

2. Հանդուրժողականության դեպքում մարդը կոնֆլիկտային իրավիճակում դրսևորում է համբերատարություն, խուսափում է ագրեսիայի վտանգավոր ձևերին դիմելու անհրաժեշտությունից: Այն պայմանավորված է անձի խառնվածքով, պահանջմունքների բավարարվածության մակարդակով, բնավորությամբ և այլն: Հանդուրժողականությունը նաև ուրիշների տեսակետների, համոզմունքների նկատմամբ մարդու հարգալից վերաբերմունքն է:

3.Կոնֆորմիզմը հոգեբանական այն երևույթն է,երբ կոնֆլիկտի առկայության դեպքում անձը գիտակցորեն կամ ենթագիտակցորեն ձգտում է ընդունել խմբի տեսակետը, հարմարվում է ուրիշների կարծիքին:

Բացի կոնֆլիկտների մեխանիզմների բացահայտումից, հոգեբանության կոնֆլիկտն ուսումնասիրում է նաև մարդկային գործունեության տարբեր բնագավառներում և հարաբերություններում՝ աշխատանքային, գիտահետա-զոտական կոլեկտիվներում, սպորտում,մանկավարժական գործունեության մեջ, ամուսնական հարաբերություններում և այլ ոլորտներում: (10)

---

9. Հասարակագիտություն – 10-րդ դասարան
10. Քաղաքագիտություն – Կ. Ղահրամանյան

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալս հանգում եմ այն եզրակացությանը,որ ընտանիքը հասարակության բջիջն է, առանց որի գոյություն չէր կարող ունենալ մարդը: Մարդն իր ապրած ժամանակաշրջանում միշտ բախվելու է կոնֆլիկտների հետ, որն ունակ է միայն ինքը լուծելու: Դա կլինի թե՛ պետական մակարդակով, թե՛ անձնական շահերով:

Կոնֆլիկտները լուծելու համար պետք է նախ և առաջ գալ ընդհանուր հայտարարի: Կոնֆլիկտը լուծել ոչ միայն միմյանց նկատմամբ վիրավորանք հասցնելով, այլ բանակցությունների միջոցով:

Օգտագործված գրականություն ցանկ

1. Ընտանիքի հոգեբանություն- Ա.Նալչաջյան, Ս. Մկրտչյան
2. Հասարակագիտություն 10-րդ դասարանի - Ս.Պետրոսյան, Ս.Խաչատրյանն, Հ.Խաչատրյան, Կ.Վարդանյան,Հ.Աղաջանյան
3. Ընտանիքի հոգեբանություն - Սեդրակ Ա.Սեդրակյան
4. Քաղաքագիտություն - Կիմ Ղահրամանյան
5. Հայոց պատմություն – 10-րդ դասարան